

Տեղեկատվություն

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման մեթոդաբանության բաժնում փորձագետ ներգրավելու համար դիմած և պայմանագիր կնքած անձի մասին

N	Պաշտոնի անվանում	Դիմողի անուն, հայրանուն, ազգանուն	Պայմանագիր կնքած անձի անուն, հայրանուն, ազգանուն
1.	Շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման մեթոդաբանության բաժնի փորձագետ	Վարազդատ Սուրենի Առաքելյան	Վարազդատ Սուրենի Առաքելյան

16.03.2023թ.

Հավելված

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2023 թվականի մարտի 8-ի N 20 Ա/3 հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության շինարարության քաղաքականության և գնագոյացման մեթոդաբանության բաժնի փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. ՓՈՐՁԱԳԵՏԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԴԵՊԲԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Պայմանավորված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության կողմից մշակվող իրավական ակտերի ծավալի ավելացմամբ՝ նպատակահարմար է ներգրավել պայմանագրային հիմունքներով համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

1) «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,

2) Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արդյունաբերության կամ քաղաքաշինության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

4) իրավական ակտերի մշակման փորձառություն:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Վարչությանը վերապահված առկա խնդիրների լուծման շրջանակներում փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները՝

1. ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվային փաստաթղթերի արդի պահանջների ուսումնասիրություն, ՀՀ մարզերից ստացվող սուբվենցիայի ծրագրային հայտերի ամփոփում, վերլուծում և մասնագիտական դիրքորոշման ներկայացում, դրանց տեխնիկական առաջադրանքների մշակման և

լրամշակման, դրանցում նորմատիվային հղումների, իրավական ակտերի արդի պահանջների ապահովման գրավոր առաջարկների և պարզաբանումների ներկայացում, համայնքային պատվիրատուների հետ քննարկումների ապահովում,

2. ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հրապարակվող շինարարության ոլորտի վիճակագրական տվյալների մոնիթորինգ և վերլուծություն, գրաֆիկական նյութերի մշակում, բազային տվյալների հավաքագրում,

3. Կոմիտեի քաղաքացիական պաշտպանության հանրապետական ինժեներական ծառայության պլանով նախատեսվող միջոցառումների շրջանակներում քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների նախատեսման, վերակառուցման վերաբերյալ ոլորտի լիազորված մարմնի ներկայացուցիչների (ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՆԳՆ) հետ փոխգործակցություն, մասնագիտական առաջարկների ներկայացում, խնդիրների բացահայտում:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետի աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամփոփ հաշվետվության ձևով, որում ներառված ստորև ներկայացված բաղկացուցիչները հանդիսանում են գնահատման առարկա և չափանիշ՝

1) ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման N2 հավելվածով հաստատված «ՀՀ կառավարության պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի մշակման, ներկայացման, քննարկման և հաստատման» կարգի համաձայն՝ համապատասխան ժամանակահատվածներում մարզերից ստացված սուբվենցիայի ծրագրային հայտերի և տեխնիկական բնութագրերի վերաբերյալ դիրքորոշումների ու դիտողությունների ներկայացում, ինչպես նաև ամբողջական ծրագրային փաթեթների գնահատում,

2) ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող շինարարության ոլորտի վիճակագրական տվյալների, գրաֆիկական նյութերի, բազային տվյալների մշակում,

3) քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների նախատեսման, վերակառուցման վերաբերյալ ոլորտի լիազորված մարմնի ներկայացուցիչների (ՀՀ ԱԻՆ, ՀՀ ՆԳՆ) հետ փոխգործակցության, մասնագիտական

առաջարկների ներկայացման, խնդիրների բացահայտման արդյունքների հիման վրա ներկայացվող հաշվետվություն և առաջարկություններ: